ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊԳԿՎ-ԲԸԱՀԱՇՁԲ-2016/1» ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

29.04.2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչության աշխատակազմի ղեկավար ՝ Վ.Հարությունյան

Անդամներ՝
Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա.Սահակյան:
Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Ն.Ասատրյան:
Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ.Էլարյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի պետ Դ.Գրիգորյան:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ Կառավարական N 3 շենքի տարածքների նորոգման աշխատանքներ- 31862700 ՀՀ դրամ:

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

«ՊԳԿՎ-ԲԸԱՀԱՇՁԲ-2016/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության շենքում, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, ապրիլի 29-ին ժամը 10:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	Կազմակերպության հասցեն
1	«ԱԳԱԹ-777» ՍՊԸ	ք.Երևան, Շիրակի փակ.4

3. Տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

3.1 «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված էր սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին .

4.1 **«ՊԳԿՎ-ԲԸԱՀԱՇՁԲ-2016/1»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերով սահմանված կարգով «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն փակ ծրարով ներկայացրել է.

ա. ընթացակարգին մասնակցելու դիմում, որում հրավերով սահմանված կարգով նշված է հարկ վճարողի հաշվառման համարը (Հավելված 1)

բ. որակավորման չափանիշների վերաբերյալ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ հայտարարություն «Մասնագիտական փորձառության» մասին (Հավելված 3.1) /ներառյալ հիմնավորող փաստաթղթերը-համանման պայմանագրի պատճեն, հանձնման-ընդունման արձանագրությունների պատճեններ/, հայտարարություն «Տեխնիկական միջոցների» մասին (Հավելված 3.2) և «Տեխնիկական միջոցների մասին» տեղեկանք (Հավելված 5.1) /ներառյալ հիմնավորող փաստաթղթերը- տեխնիկական անձնագրեր և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճեններ/, հայտարարություն «Ֆինանսական միջոցների մասին» (Հավելված 3.3), հայտարարություն «Աշխատանքային ռեսուրսների մասին (Հավելված 3.5) և «Կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին» տեղեկանք (Հավելված 5.2)/ ներառյալ հիմնավորող փաստաթղթեր-աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները, մասնագետների անձնագրերի, դիպլոմների և աշխատանքային գրքույկների պատճենները/

գ. գնային առաջարկ (Հավելված 4),

դ. հայտի ապահովում (Հավելված 9),

ե. հրավերով նախատեսված լիցենզիաների պատճենները:

Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմված են բնօրինակից և 1 օրինակ պատճենից և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	**Կառավարական N 3 շենքի տարածքների նորոգման աշխատանքներ**			
		Գնի առաջարկ			
		Արժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված գին
1	«ԱԳԱԹ-777» ՍՊԸ	23882500	2627075	5301915	31811490

6. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

Բանակցություններ չեն վարվել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար,

բ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին:

2) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ֆինանսական միջոցներ» չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայություն վերաբերյալ:

3) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացությունը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հայտերը գնահատելու նպատակով հանձնաժողովի անդամներին տրամադրել եզրակացությունը և գնահատման թերթիկների 2-ական օրինակները:

4) Գնահատման արդյունքների հաստատման նպատակով բացման նիստը շարունակել փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդ օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.Հարությունյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Ա.Սահակյան** .....

Ն.Ասատրյան .....

Լ.Էլարյան .....

Քարտուղար՝ **Դ.Գրիգորյան** .....

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2/1

«ՊԳԿՎ-ԲԸԱՀԱՇՁԲ-2016/1» ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 05.05.2016թ.
ժամը՝ 11.00

Հանձնաժողովի նախագահ՝

Վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ.Հարությունյան

Անդամներ՝

Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա.Սահակյան:

Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Ն.Ասատրյան:

Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ.Էլարյան:

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի պետ Դ.Գրիգորյան:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացությունը. «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ հայտարարությունը որակվեց իրականությանը համապատասխանող: Գնահատման արդյունքները արտացոլված են գնահատման թերթիկներում:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասը՝ հայտը գնահատել բավարար և ընտրված մասնակից ճանաչել «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին:

2) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 74-րդ կետի 1-ին մասի է) ենթակետը՝ անգործության ժամկետ չկիրառել:

3) Հաստատել ԲԸԱՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի նախագահ՝	**Վ.Հարությունյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ա.Սահակյան**	.....
	Ն.Ասատրյան	.....
	Լ.Էլարյան	.....
Քարտուղար՝	**Դ.Գրիգորյան**	.....